ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
N 16/25-3 որոշման

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կարիքների համար Ընկերության տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ենթակա պարտադիր ապահովագրման ծառայությունների ձեռքբերման N «ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՊԸԾՁԲ-16/25» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան **29.04.2016թ.**

Մասնակցում էին՝ **Նախագահ՝ Ա.Մարտիրոսյան**

Անդամներ՝ Դ. Գասպարյան, Կ. Անդրիասյան, Դ. Ադամյան

Քարտուղար՝ Հ. Հովհաննիսյան

Նիստին մասնակցում էին «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ, «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ լիազորված ներկայացուցիչները

1. Տեղեկություններ գնման նախնական պայմանագիր կնքած այն անձանց (անձի) մասին, որոնց պատվիրատուն ուղարկել է գնային առաջարկ ներկայացնելու ծանուցում

«ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՊԸԾՁԲ-16/25» ծածկագրով մրցույթի շրջանակներում www.gnumner.am կայքում հրապարակվել է Ընկերության տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ենթակա պարտադիր ապահովագրման ծառայությունների ձեռքբերման պարզեցված ընթացակարգի հրավերը, որը տեղադրվել է http://gnumner.am/?module=hosting&utility=file_download&file=171991 հասցեում:

2. Տեղեկություններ գնային առաջարկներ ներկայացրած մասնակիցների մասին

N	Մասնակցի	
	Անվանումը	**Գնային առաջարկը ներկայացնելու ամիսը, ամսաթիվը**
1	«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ	28.04.2016
2	«Ինգո Արմենիա» ԱՓԲԸ	29.04.2016
3	«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ	29.04.2016
4	«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ	29.04.2016
5	«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ	29.04.2016

2.1 Գնային առաջարկներ պարունակող ծրարները բացվել են 29.04.2016թ. ժամը 15:00-ին ք. Երևան Վարդանանց փակ.8, 5-րդ հարկ, Ադմինիստրատիվ և ֆինանսական տնօրենի աշխատասենյակում:

2.2 Գնային առաջարկներ այլ մասնակիցներ չեն ներկայացրել:

3. Տվյալներ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.

«Ինգո Արմենիա», «Ռոսգոսստրախ-Արմենիա», «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ների, «Նաիրի Ինշուրանս» և «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ների կողմից ներկայացված ծրարները կազմված էին հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր առաջարկում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

N «ՀՀԳՆԱՏՊԿ-ՀԱԿԸ-ՊԸԾՁԲ-16/25» ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման հրավերով սահմանված կարգով մասնակիցները փակ կնքված ծրարներով ներկայացրել էին գնային առաջարկ՝, ինքնարժեքի հաշվարկ, հայտարարություն մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր հատկանիշների համապատասխանության և գրանցման պահից հետո դրանց առկայության, ինչպես նաև հրավերով սահմանված տեխնիկական հատկանիշներին համապատասխան *աշխատանքների կատարման ծառայությունների* մասին: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից:

5. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

«Ինգո Արմենիա», «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ների, «Նաիրի Ինշուրանս» և «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ների կողմից մրցույթի գնային առաջարկ ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ կողմից ներկայացված փաստաթղթերի տվյալները չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին /*ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 44 կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի, 45 և 46 կետերի համաձայն հայտը գնահատվել է անբավարար*/:

6. Մասնակիցների գնային առաջարկները.

h/h	*ծառայություններ*	Չափման միավոր	Գնի առաջարկները / ՀՀ դրամ/									
			«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ		«Ինգո Արմենիա» ԱՓԲԸ		«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ		«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ		«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ	
			Առանց ԱԱՀ	Գինը	Առանց ԱԱՀ	Գինը	Առանց ԱԱՀ	Գինը	Առանց ԱԱՀ	Գինը	Առանց ԱԱՀ	Գինը
1	«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ենթակա պարտադիր ապահովագրման ծառայությունների	**փաթեթ**	14,244,100	14,244,100	14,244,100	14,244,100	7,339,150	7,339,150	13,576,800	13,576,800	5,040,450	5,040,450

«Ինգո Արմենիա», «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ների, «Նաիրի Ինշուրանս» և «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ների կողմից մրցույթի գնային առաջարկների ինքնարժեքի հաշվարկում թվաբանական անճշտություններ չկան:

«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ կողմից ներկայացվել է անբավարար գնային առաջարկ:

7. Հանձնաժողովը որոշեց.

7.1 «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

7.2 1. չափաբաժնով

1-ին տեղ զբաղեցնող ճանաչել	«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին
2-րդ տեղ զբաղեցնող ճանաչել	«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ -ին
3-րդ տեղ զբաղեցնող ճանաչել	«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ –ին և «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ին

7.3 Հանձնարարել Հանձնաժողովի քարտուղարին՝

7.3.1 Սույն արձանագրության լուսապատճենը տրամադրել մասնակիցներին,

7.3.2 Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային եղանակով՝

ա/ Հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ըստ առանձին չափաբաժինների առաջին և երկրորդ տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ,

բ/. Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

7.4 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 06.05.2016թ-ին ժ. 10:00-ին ՝ «ք. Երևան Վարդանանց փակ. 8, 5-րդ հարկ, Ադմինիստրատիվ և ֆինանսական տնօրենի աշխատասենյակ» հասցեում:

8. Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ ..... **Արմեն Մարտիրոսյան**

Հանձնաժողովի անդամներ՝ ..... **Դավիթ Գասպարյան**

..... **Կարեն Անդրիասյան**

..... **Դավիթ Ադամյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ ..... **Հայկ Հովհաննիսյան**